ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» հունիսի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-54/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Սոնատինա» ՍՊԸ-ի 16.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Սոնատինա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 16.05.2016թ. ներկայացրած բողոքով «Սոնատինա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ 2016թ. ապրիլի 19-ին «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գրավոր իրազեկում է ստացվել այն մասին, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի թիվ 9 հավելվածում առկա է անհամապատասխանություն՝ թիվ 9

հավելվածում, ինչի համար հանձնաժողովը դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) հայտի ապահովման վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով, որի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

«Սոնատինա» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ վերը նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով, լրացնելով թիվ 9 հավելվածը, առաջնորդվել է ընթացակարգի հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներով, մասնավորապես, «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թերի է համարել թիվ 9 հավելվածով նախատեսված տուժանքին կից վճարման պահանջագիրը՝ հաշվի առնելով նշված գումարի արժույթի նշված չլինելը: Սակայն վճարման պահանջագրի օրինակելի ձևում բացակայում է արժույթի նշման դաշտը:

Ընկերությունը նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը և հայտնել է, որ թիվ 9 հավելվածով սահմանված պահանջագրի լրացման կարգը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20.05.2004թ. 131-Ն որոշման համաձայն չի ապահովում տուժանքի վճարումը, իսկ տուժանքի համաձայնագիրը ունի դրա բոլոր իրավական հիմքերը, որը Ընկերության կողմից լրացվել է պատշաճ կարգով, ուստի վճարման պահանջագրի անհամապատասխանությունը կարող է շտկվել՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները:

«Սոնատինա» ՍՊԸ-ն, հաշվի առնելով վերոնշված բողոքի հիմնական պատճառաբանությունները, խնդրել է դադարեցնել ՀՀ մշակույթի նախարարության կողմից երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. <u>ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Սոնատինա» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար 22.03.2016թ. հայտարարվել է երաժշտական գործիքների ձեռքբերման «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով պարզեցված ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցել են թվով հինգ կազմակերպություններ, որոնցից չորս հայտերում առկա էին հրավերով սահմանված հայտի ապահովման՝ վճարման պահանջագրի անհամապատասխանություն, ինչի վերաբերյալ Պատվիրատուն դիմել է Կենտրոնին՝ պարզաբանում ստանալու նպատակով:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Կենտրոնի կողմից 21.04.2016թ. թիվ 01/04.2/1603-16 գրությամբ ներկայացված հայտի ապահովման լրացման կարգի վերաբերյալ պարզաբանումը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է մերժել «Սոնատինա», «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս», «Տեսակենտրոն» և «Լուսնթագ-1» ՍՊ ընկերությունների հայտերը, որոնցում հայտի ապահովման վճարման պահանջագրի լրացման կարգը չէր համապատասխանում հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին, մասնավորապես, բողոքով ներկայացրած մասնակցի՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ թիվ 9 հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնության և դրան կից վճարման պահանջագրում բացակայում էր արժույթը (բառերով կամ կոդով գրված):

3. <u>ԳԲԽ-54/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-54/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար 22.03.2016թ. հայտարարվել է երաժշտական գործիքների ձեռքբերման «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով

պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով հինգ կազմակերպություններ՝ այդ թվում նաև «Սոնատինա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 13-րդ կետի համաձայն՝ «արժույթը (բառերով և/կամ կոդով)» դաշտում պարտադիր լրացվում է արժույթը:

3. «Սոնատինա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացրել է հետևյալ ձևով.

<table>
<tr><td colspan="3">ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1
"_____" _____ 20___ թ.</td></tr>
<tr><td>Վճարող՝ Սոնատինա ՍՊԸ
ՀՎՀՀ - 02706487</td><td>ԴԵԲԵՏ
2050022302531001</td><td>ԳՈՒՄԱՐ
455.000.00</td></tr>
<tr><td>Վճարողի բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ</td><td rowspan="2">ԿՐԵԴԻՏ</td><td>ԳՈՒՄԱՐ
(ԲԱՌԵՐՈՎ)

չորս հարյուր հիսունհինգ հազար</td></tr>
<tr><td>Շահառու՝
ՀՎՀՀ -</td><td></td></tr>
<tr><td>Շահառուի բանկը՝</td><td colspan="2">հշ.N</td></tr>
<tr><td colspan="3">Գումարը բառերով՝ չորս հարյուր հիսունհինգ հազար</td></tr>
<tr><td colspan="3">Գնման գործընթացի ծածկագիրը՝ ՀՀՇՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58</td></tr>
<tr><td colspan="3">Վճարման նպատակը՝ տուժանք</td></tr>
<tr><td colspan="3">Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը
Կից____էջ</td></tr>
<tr><td colspan="2">Շահառուի ստորագրությունները

/_____/

/_____/
Կ.Տ.</td><td>Վճարողի ստորագրությունները

/_____/

/_____/
Կ.Տ.</td></tr>
<tr><td colspan="2">Կատարված է շահառուի բանկի կողմից

/_____/

«__»_____20__թ.
Կ.Տ.</td><td>Կատարված է վճարողի բանկի կողմից

/_____/

«__»_____20__թ.
Կ.Տ</td></tr>
</table>

4. Պատվիրատուն թիվ 95-16 գրությամբ դիմել է Կենտրոնին Ընկերության կողմից հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի լրացման վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

5. Կենտրոնը թիվ 01/04.2/1603-16 գրությամբ հայտնել է, որ վճարման պահանջագիրը գնահատվում է հրավերի պահանջներին համապատասխանող, եթե վերջինիս՝ մասնակցի կողմից լրացման ենթակա՝ որպես պարտադիր նշված դաշտերը սահմանված կարգով լրացված են: Հակառակ դեպքում, նշված փաստաթուղթը (ինչպես նաև հայտի ապահովումը) գնահատվում է անբավարար և մասնակցի հայտը մերժվում է՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 11.04.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության.

- 1.4 կետի համաձայն՝ «Սոնատինա», «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս», «Տեսակենտրոն» և «Լուսնթագ-1» ՍՊ ընկերությունների հայտերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին:
- 1.6 կետի համաձայն, հիմք ընդունելով Կենտրոնի կողմից ստացված 01/04.2/1603-16 ստացված հայտի ապահովման լրացման կարգի վերաբերյալ պարզաբանումը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է մերժել «Սոնատինա», «Սարկիս Կազանջյան Ընդ Սանս», «Տեսակենտրոն» և «Լուսնթագ-1» ՍՊ ընկերությունների հայտերը, որոնցում հայտի ապահովման վճարման պահանջագրի լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններին:

4. <u>ԳԲԽ-54/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Սոնատինա» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 18.05.2016թ. թիվ 116-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ ***հրավերով սահմանված կարգով*** ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Նույն կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ ***հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին

էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. N 667-Ն հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնության և դրան կից՝ ***վճարման պահանջագրի*** ձևով:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ արժույթը (բառերով և/կամ կոդով) լրացնելը պարտադիր է:

Ուսումնասիրելով «Սոնատինա» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը՝ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը հրավերով սահմանված պայմաններին (դրա համար նախատեսված լրացման կարգին) չհամապատասխանելու, մասնավորապես՝ տուժանքի ապահովմանը կից ներկայացվող վճարման պահանջագրում արժույթը (բառերով և/կամ կոդով գրված) չնշելու հիմքով, պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված պահանջները, քանի որ «Սոնատինա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացրել է Ընթացակարգի հրավերով սահմանված ***«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ով սահմանված դրույթների անհամապատասխան, մասնավորապես*** վճարման պահանջագրի պարտադիր լրացման ենթակա վավերապայմաններ հանդիսացող գումարը դաշտում չի նշել արժույթը ***(բառերով և/կամ կոդով գրված)***:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Սոնատինա» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել, անփոփոխ թողնել ՀՀ մշակույթի նախարարության կողմից երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՄՆՄԾԻԳ-ՊԸԱՊՁԲ-16/58» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-45/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան